

ԲԱՎԱՆՈՐՈՂ ԱԳՐՈՒԹԻՒՆ

ուղարկոյ համար
Տարեկան 12 թր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
Տարեկան 3 ճ.ր.
Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Մանուցման սոդր առաջին երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքին անկի անգամներու համար 20 ՕԿՈ գեղը կը լայն :

ՇՄԱՐԹԻՆ

Նախկ եւ դրան դրկեչ
Խմբագրութեան հասցեին

—

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԻ ԶՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇՄԱՐԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Արտասահմանի համար ձեռքի
(Գ Ի Ն 20 Ս Ա Ն Թ Ի Մ)

ՎԱՅԻԱՌՈՒՆԵՐԸ

Տեսե՛ք թէ ինչպէս գրում Սօփիայի պարբեր, հայ զաւտացին. նա գանգատում է հայ վաշխառուից, Հայաստանի դատարկվելու գըլխաւոր պատճառներից մէկը համարում է վաշխառութիւնը և վաշխառուներին: Նա որոշ կերպով շեշտում է թէ հայ վաշխառուն ամեն սեղ վաշխառու է. միշտ պատրաստ իր խեղճ, հալածուած և շարտանջ եղբոր կաշին քերթելու, արիւնը ծծելու թէ հայրենիքի մէջ՝ թուրքի հետ ձեռք ձեռքի տուած և թէ ազատ երկրում:

Վաշխառու, ինչ քսոմենի, զըւելի մի տիպ, մակարոյժ, որ մտնելով մեր ժողովրդի միամիտ, անտէր և անօգնական խաւերի մէջ—կամաց կամաց—դուրս է քաշում նրա արիւնը, հարկաւոր կաթիլներէրից մի մի զուրուշ կազմում և ապա զեղին սուկի վերածում:

Տեսե՛ք է՞ք, գիտե՞ք թէ վաշխառուն ի՞նչ հրճուանքով է շոյում սոկոսներից կազմուած կոլոր սուկին. նա այնտեղ իր ցանցը ընկած զոհի արեան փայլուն կաթիլներն է տեսնում և իր ընչաքաղցրութեան անյագ ծարաւին թեթեւ բաւականութիւն անդամ չէ ստանում: Ան վաշխառուի այդ ծարաւը երբէք չի յագնայ. այդ ծարաւը յաւիտենական է. ժողովրդային արեան ծովերն անգամ եթէ ոսկիի վերածվեն և վաշխառուի գրպանը մանեն՝ վաշխառուն նորից զոհ, նորից արիւնից ոսկի դարձած սոկոս կը փնտռէ:

Վաշխառուների հարցը հայերիս մէջ հին հարց է. Հայաստանի ամեն մի փոքրիկ գիւղ, ամեն մի քաղաք ունի իր ցեց վաշխառուն: Արտասահմանի մէջ էլ ամեն մի հայաբնակ տեղ ունի իր վաշխառուն որոնք քամում են ժողովրդի առանց այն էլ անհիւթ սարրի բոլոր կենսական հիւթերը:

Եւ դրելով քարոզելով չէ կարելի վաշխառուին զգացնել տալ

իր անխղճութիւնը, մարդ դարձնել. Դրանց պէտք է պատժել, ինչպէս զողին մարդասպանին: Դրանց պէտք է տրտել ոչնչացնել ինչպէս կենդանիների մտի մէջ խրուած մակարոյժներին: Միամիտ ամբողջ անկարող է դրանց դիմադրել, ուստի ամեն մի մաքուր և զարգացած հայ, իր ապրած շրջանի մէջ ուշի ուշով պէտք է հետեւի այդ սարդերին և երբէք չը թոյլ տայ ցանցեր նետել:

ՎԱՐԴՈ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՈԼԻՍ, 24/7 Փետրվ.

Բաւական աստեղ է որ Թաղիկ շարաթաթերը զարդացուած են, և խմբագիր Էֆենտին բանաբ ՚նետած:

Եթէ կաթիլի հայերու պատրիարքը չի յաջողի ազատել տալ, անպատճառատ միամիտ մարդը պիտի սքսորեն:

Փակման պատճառն հետեւեալն է. Օր մը ոչեւորուած Հայր Ալիշանի անձով, անոր պատկերը կը զետեղէ իր թերթին երեսը և թերթին անունն ալ, իրը իսկական ծաղիկ կարմիր գոյներով կը ապէ...

Կարմիր... է — արիւնն է կարմիր և յեղափոխականները կրտսերն այդ գոյնը... Ան կը ձերբակալին աէրը, թերթը կը մորթեն...

Բանտարկեալներ շատ: Արդէն մեր սրտերը բաւական քարացր են. այլ ևս չենք խղճահարուիր. Չիղերնիս բթացել, անզգայացիք են: Բայց աս զէպքը խիստ ազդեց վրաս: Ես անձամբ չեմ ճանչնար այդ անձը, միայն գիտեմ որ թերթ մը կը հրատարակէ, ուրիշն ուսանայիքունը քսածին պէս «ինտէլիկենթ» անձ մըն է. որ կուզէ իր հասարակութեան ծառայել օրինական, պարզ ու յայտնի ճամբով: Բայց ինչպէս կերեւայ պատմը պէտք ունէր հասկնալու, որ հոն ուր լեզուդ արմատէն կը հանեն կանոնաւոր միտք մը յայտնուած աստեղ, ազատ բար մը, նախագաստութիւն մը գրելու համար Աքեաի, Արապիաի և Ղարայ Թարապուզի բանտերուն մէջ կը հոտեցնեն մարդերը և վերջապէս հոն, ուր մարդը մարդու համար զոհուն է և ոչ ոք իր նմանը «եղբայր» կոչելու, անոր օգնելու իրաւունք ունի և ամէն մարդկային իրաւունքները ընդգրկող պատճանոցի հրէջին սքսորուն տակը սքսորուած են, ստա-

ջաղիմական, օրինական ուղին արդիւնք չի կրնա տալ. հնարաւոր չէ, Հնարաւոր միակ ճամբան զաղանի գործն է, յեղափոխական ճամբան է:

Կառավարութիւնը իր ուզածն ըրաւ:

Պահա պէյ Բ. Դրան կողմէ իբր տէր ևւ տնօրէն, գնաց Ատանա կիլիկիոյ կաթողիկոսի ընտրութիւնը կատարելու:

Սպայեան եպիսկոպոսի դերը հոն իբր «մենք ալ գոյութիւն ունինք տեսէք». պարզ աւելորդութիւն մը. առանց ո եւ է իրաւունքի: Օրմանեան վաստկեցաւ:

Աս պարագաներու մէջ հաւանական է որ Մեսրոպ, Աբրահամ կամ Բարդուղիմէոս յրաւս եպիսկոպոսներէն մին նստի կիլիկիոյ աթոռը: Օրմանեան բաղձանքին հասաւ: Թուրքին բարեկամ ինչու քաղաքականութիւնը րաակէ աւելի արդիւնք տալ չէր կրնար:

Արտասուեախառն ծաղրածութիւն մը կատարողի աս սոցիեր գրածս պահուն Ատանայի մէջ, Ետը 1200 օր հայերը զբաղդնող խնդիրը վախճանի մը կը մտնենայ: Եւ վախճանը կախուած պիտի ըլլայ ու արդէն է, Պահա պէյի մը մէկ մատին շարժումէն:

Մի՞թէ անշուշտ մարգարէ մը պէտք է ըլլալ գուշակելու համար թէ Պահա պէյի պէս կծու թուրք պաշտօնեայի մը և Համիտի գործիքներուն թեկնածուն կիլիկիոյ աթոռին համար կրնան միայն Բարդուղիմէոսը, Մեսրոպը կամ առանց նման մէկ տարբեր լրտես մը ըլլալ:

Երբք երկա՛ր տարիներու սրտամաշո՛ք, ճառեր, մրտած թուղթեր, էնթրիգներ, կեղծիք, սուտ ու խաբերայութիւն... կայսերական իրատէնը ու ժողովներու որոշումներ, ու աս ամէնուն արդիւնքը՝ մուկ մը, չնչին ու թշուառ ծաղրածուական, հասարակական արդիւնք մը: Պահա պէյը պիտի կազմել տայ ընտրելիներուն ցանկը և զրկէ Բ. Դուռ կողուած աւազականոցը. հոն պիտի սացուցակը սքսորեն ու թողնեն սոսկ լրտեսներու անունը և վերադարձունեն: Այդ սքսորուած ցանկէն պիտի կատարուի ընտրութիւնը:

Այս ընտրական իրաւունք չէ, այլ խայտառակ միմտութիւն:

Եւ այս միմտութեան հեղինակն է Օրմանեան որ այժմ աղի-աղի ար-

ցունքներ կը թափէ իր ցոյց մարդկանց:

Այժմ ո՛ւշ է, խիստ ուշ:

ԲԱԺ

ՍՕՖԻԱ, 28 Փետր.

«Շարժում» կարգացողներէն ըլլալով շատ անգամ աչքիս զարնուած են այլ և այլ նամակներ, որոնց մէջ մեր ազգին դժբախտութիւնները կը նկարագրեն, ասոնց պատճառները կը յայտնեն և ժողովուրդը կը յորդորեն ուղիղ ճամբու մէջ մտնել. սակայն բան մի կայ որուն վրայ շատ քիչ գրած էք՝ այն է վաշխառութիւնը, որ մեր հայաստանցիներու սուղը աւերող և մեր գաղթականութեան գլխաւոր պատճառներէն մէկն է: Եւ յիշաւի ո՞ր հայաստանցի պաղթական եղբայր այս բնէն ազատ է: Երկիր եղած ժամանակնիս երբ ստակի պէտք կուսենանք մեր սուղին կամ թուրքին սուրբը վճարելու համար՝ մեր հարուստ աղաներուն կը դիմենք ու կառնենք 1—2 ոսկի. կը վճարենք հիւքի մէթին սուրբը, զապթիէն ճամբայ կը գնենք ու շատ շտիցած մենք ալ ճամբայ կելլանք զէպի օտար աշխարհ որ փարա վաստկիւք և մեր աղաներուն ունեցած պարտքերնիս վճարենք: Սակայն, ո՞վ Աստուած իմ, ինչէր կը քաշենք մինչեւ որ պարտքերնիս կը վճարենք. զի-յայտնի է որ մէկէն ի մէկ չենք կրնար վճարել, այլ կամաց կամաց, որովհետեւ 1—2 ոսկին 1—2 տարուան մէջ 10—15 ոսկի կը բարձրանայ, որովհետեւ 100ին 30—50 տոկոս կառնեն ամսական. երբ ազատ երկիրները ոտք գնենք ու երբ ստակի պէտք ունենանք մեր դուրսի աղաներուն կը դիմենք, հաւատալից ըլլալով թէ այս աղաները հայրենիքի աղաներուն պէ՛ք քարսիրա չեն, փոխուած կըլլան, կակուղցած ուրիշ ազգերու հարուստներուն նայելով: Բայց որչափ կը սխալինք, Աստուած ալ գիտէ որ ասոնք աւելի գէշ են, աւելի անխիղճ և քարսիրա են:

Այս կարգէն են քաղաքիս մեր

քէմախցի թիւ թիւնճի սարաֆ ա-
զաները . վայ եկեր է մէկու մը
երբոր ասոնց պէտքը ունենայ .
100 ֆրանքին ամիսը 15—20 ֆր.
կը պահանջեն . ինչ ընեմ, գրեւ
կարգաւ չը գիտեմ որ ասոնց քիչ
մը խրատ տամ, բայց ներսէս
այսչափը կուզայ որ ըսեմ մեղք
չէ, ամօթ չէ:

Ա. Կ. Ա. Ր

ՊՈՒՐԿԱԶ . 26 Փետր.

Տեղւոյ հանգուցեալ թուրքերէն
Հուզուդի, ներկայ հայերէն թեր-
թին, որ կրկին խառն է իր հարա-
զատ թուրքերէնի հետ, Պ. քաղաքի
թղթակիցը նոյն թերթի 11 թուոյն
մէջ կր գրէ թէ ստեղծ վերին յանձ-
նաժողով մը կազմուած է, որուն
կանգամակցին ամէն կուսակցու-
թեանց անդամներն անձեր: Անչուշա
այս կարգադրութիւնն աւելի որոշակի
կերպով վեր պիտի հանէ ձեր առա-
ջարկուած ազգային պաշտպանու-
թեան նուիրական դատը:

Կոկորդիլոսի արցունքներ թափող
այդ թղթակիցը, Սամաթիոյ պատ-
մութեան մամուտը յափշտակուած
իր ինչ գրելն անգամ չը գիտնայով,
ասանց ամչնալու, իր շորս ընկեր-
ներով մէկտեղ լրագրութիւն մը ի-
րենց սուտ եւ լպիրջ լուրերով զբա-
ղեցնել կը ձգտի. ո՛ւր, ե՛րբ որ ժա-
մանակ այդ տեսակ բան մը տեղի
ունեցած է սեղս, կամ թէ որոնք են,
այդ զլուտ տէր, ինքզինք գիտցող
եւ երկու խօսք անգամ իրարու ե-
տեւէ ուղիղ խօսող, ամէն կուսակ-
ցութեան անդամներ, որոնք «ազ-
գային նուիրական դատը» կենսա-
կան եւ ամէն բանէ աւելի կարեւոր
նկատելով եւ յանձնաժողով մը կազ-
մելով, իրենց նիստերը կը շարունա-
կեն համաձայնութեամբ, ասանց զի-
մազրութեան հանդիպելու. ուրեմն
թող ներուի մեզ խնդրել խմբագրու-
թեանէ եւ իր թղթակիցէն այդ անա-
նուն եւ հետքը անգամ չը տես-
նուած պատկանելի տեսակ տեսակ
կուսակցութեանց յանձնաժողովոյ
պատգամաւորներու անուններ հրա-
պարակել լրագրութեան միջոցաւ.
որպէս զի մենք եւս գիտնանք թէ Պ.
քաղաքի մէջ այդ տեսակ անուն-
ներ կր գտնուին, եթէ սուտ չէ:
Միեւնոյն ժամանակ ալ տարակուսա-
նաց մէջ եմք թէ արդեօք թղթա-
կիցը այդքան քաջութիւն պիտի ու-

նենայ քանի մը հնդկական կամ
մօնղոլական նոր անուններ եւս ստեղ-
ծել, եւ «Ազգամաք»-ին այս անգամ
ալ կրկինեւ տալ: Եթէ կան ու կը
գտնուին տարբեր տարբեր կուսակ-
ցական մարմիններ Պ. քաղաքի մէջ,
եւ ունին իրենց ձեռաց մէջ ալ ծրա-
գիր մը, եւ այդ ծրագրի ուղղու-
թեան համեմատ կը շարժին, թո՛ղ
գտնուին. սակայն չեն կրնար մի-
ջամտել այնպիսի խնդրոյ մը, որ
ամբողջ անցուղարձին տեղեկութիւն
չունենալէ ի զատ, ազատ են պատաս-
խանատուութենէ ալ. ասոնք Պ. քա-
ղաքի թղթակիցի եւ իր չումբանեայի
նման քիթապսրդ առնալու տեսերու
չեն նմանիր:

Մենք որ տարիներէ ի վեր այս տեղ
կապրինք, ամէն շաբաթ գիտենք եւ
իւրաքանչիւրի ամէն մէկ քայլին
հետեւած, իրենց իսկական գոյներով
կը ճանչնանք. ինչպէս որ այդ ա-
ռարկուածնեղն մաս մը, ինչ զա-
սակարգի պատկանելն, ինչ ախարի
տէր անձնաւորութիւններ ըլլալին,
երկու երեք ամիս առաջ նկարագրե-
ցինք եւ ցայց սուինք Շարժումի
յարգոյ ընթացողաց:

Տեղւոյ ամբողջ հայ ժողովրդեան
երեսն հնգամ, խմբագրութեան մը
թղթակիցի պաշտօն կատարող այդ
մարդիկ, եթէ քաջութիւն ունին ի-
րենց երեսի այդ կեղծ դիմակը վար
առնելով ինչպէնքնին թո՛ղ յայտ-
նեն, կամ թէ նոյն թերթի մէջ ո-
ր, եւ յատկա կերպով մեր հարց-
մանց պատասխանեն: Պատուազգածի
մը գործ չէ, երկտող գրել եւ փա-
խուստ տալ. երբ խնդիր յուզուի
եւ քացատրութիւն պահանջուի, Պ.
քաղաքի ժողովրդեան մէջ չի կայ այդ
տեսակ արտակարգ խնդիր մը որ
յուզէ ամէն մէկ անհատի սիրտը վե-
րին ժողովներ կազմելու խնդիրը
հրապարակելու համար: Կր կրկնեմ,
եթէ այդ գոմիթէն քաջութիւն ունի
նախեւառաջ թո՛ղ պարզէ այն հարցը,
որ երկու տարի շարունակ զաւա-
ռացի բեռնակիր դասակարգը շահա-
գործեց, ամսական մէկ մէկ ֆրանք
առնելով, մարդիկ Ամերիկա եւ Ափ-
րիկէ ճամբորդեցնելու, հայկական
յեղափոխութիւն զուրս բերելու հա-
մար. ո՛ր միայ այդ հաշիւ, ինչո՞ւ
մտ թին մէջ կը պահուի. որո՞ւ կրկնող
անցաւ: ինչո՞ւ ձեր աչքերուն մէջի
գիրան չէք տեսներ, եւ ասանց ա-
մրչնալու ելած էք ձեր պրոտոստա-
ստութիւնը շարունակել, իսկ միւս
կողմէն, այս եւ այն ինքնակոչ թա-

փառական հրէաներ կշտացնելու ե-
տեւէն էք:

Որքան որ կուզէք մտ թի մէջ ժո-
ղովուրդ առաջնորդել զկար խորխո-
րատ երեւակեական յոյ ելով, ձեր
խաչագողական շահագործում ստաջ
առնելու համար, բայց զիցացած ե-
ղիք որ, ամէն գոհողութիւններ
յանձն առած եմ ձեր ամէն մէկ քայ-
լին հետեւելու այդ տեսակ սուտ եւ
զրպարտութիւն հերքելու, այն պայ-
մանաւ որ երբէք իրական սահմանն
չանցնիմ. այն ուխտով է որ ու թը
ամիսէ ի վեր Շարժումի կը թղթակ-
ցիմ, եւ միանգամայն ընկերական
ատենի կը հրաւիրեմ այս խնդրոյ
մասին: Ահա եւ պատրաստ եմ, գրիչ-
նիդ շարժեցէք, որ ալ սեղի յատկ
եւ պարզ պատասխան ատնուի: Կը
սպասեմ այդ ձեր վերին երեւակայած
յանձնաժողովի մասին պատասխանե-
լու, զիսեմ որ պիտի պատահի:

ԳԻՃՈՂ

ՊՈՍԿՈՒՆ . 26 Փետր.

Կըսուի թէ բու թուշուրը յու-
ճախ իր բոյնը կը փոխէ որովհե-
տեւ իր մարմնէն գարշահոտու-
թիւն մը կը բուրէ եւ ինք կը
կարծէ թէ իր բոյնն է որ կը
հոտի: Նիւ Եօրքի «Չայն Հայ-
րենեաց» թերթը մէկ միւսի ե-
տեւէն խմբագիրներ փոխեց բայց
կրկին գարշահոտութիւնը մնաց.
այժմ ալ սեղը փոխեց, Նիւ Եօր-
քէն հայոց աթոռանիստ քաղա-
քը—Ուսար—փոխագրութեան այն
գիտաւորութեամբ թէ Սարաճ-
եանի «պահպանիչ»-ները մի քանի
նոր բաժանորդներ պիտի պար-
գեւեն . . . :

«Չայն»-ի ներկայ խմբագիրը
Յունի. 28ին Ուսար տեղի ունե-
ցած Դաշնակցական ժողովի մէջ
հետեւեալ հարցերը կուզէ ատե-
նախօսին. Դաշնակցութիւնը ո՞ւր,
ե՞րբ եւ որքան զէնք փոխագրած
է. ո՞ր են այդ զէնքերը: Վանի
մէջ ո՞րքան զէնք մտուցեցր է
եւ ինք Եսհէնի—Վանեցի լինե-
լով հանդերձ—ինչո՞ւ չէ տեսած
Դաշնակցութեան զէնքերը: Կար-
ծեա թէ Դաշնակցութիւն իր բու-
լոր զէնքերը Եսհէնի մօր պահ
պիտի տար որպէս զի որդին ալ

հաշիւը գիտնար: Ու այս հարցեր
ընդը «խոհմեծ»-ներէն է, որոնք
«ժածուկ գործելու կը քարուկն»
Ընթերցողը կրնայ հասկնալ ո՞ր-
քան «գաղտնի գործող» են այս-
պիսիներ որ կը պահանջեն յի-
շափոխական կաշմակերպութենէ
մը փոխադրած զէնքերու քանա-
կը եւ տեղը հրապարակաւ յայտ-
նել: Ոյս խնդրոյ առթիւ եր-
կու ոչ-Դաշնակցական պարոններ
«Հայրենիք» մէջ ապուակեցին
Եսհէնի իմաստակը որ վերջերս
իր սիրապետական ոճովը գուրս
եկաւ: Լսեցէք թէ ինչ կըսէ.
«մեր սովորութիւնը եղած է միշտ
գաղափարի կռիւ մղել այս խնդի-
րը (զէնքերու ուր փոխադրուելը)
անձնական խնդիր ըլլալով չինք
ուզեր ստով զբաղուիլ»: Ընթեր-
ցողին ցոյց տալու համար թէ
«Չայն Հայհոյանոց» ինչ կը հաս-
կնայ «գաղափարի կռիւ» ըսելով
եւ վեր կառնեմ մի քանի նմուշ-
ներ: Օրինակ վէճ մը ծագեցաւ
թէ «կանայք բեմէն խօսելու իրա-
ւունք ունին» . այս փառա թեր-
թը երկար վիճեցաւ թէ Հայրե-
նիքի «Արեւ» ստորագրութեամբ
թղթակիցը հայրենիքի խմբագ-
րութիւնն է: Ոյս նոյն Եսհէնին
էր որ ձեր թղթակից «Ա. Ե. Ո»-ի
անունն շուրջ դարձաւ, շարժու-
թեանը գոյցուած է ըսաւ ու թոյ-
լատրեց որ իր թղթակիցներն ալ
«Ա. Ե. Ո»-ի ու ըլլալը, ի՞նչու մի
գիտա երեւան հանեն: Եսհէնին
ինքն էր որ հայ գրող կանու թեան
մասին ծագած վէճի մէջ «Թ. Չ. ի
հօրեզօր որդին թերքացած է»
հրատարակեց: Ու ասոնք ամէն
գաղափարական վէճ են «Չայն»-ի
կարծիքով. իսկ երբ խնդիրը
կուզայ այն կէտին թէ յեղափո-
խական կաշմակերպութիւն մը
իր փոխադրած զէնքերու ո՞ւր ե-
րբան ըլլալը հրապարակաւ
պէ՞տք է յայտնէ, ո՞ այդ անձ-
նական, խնդիր է: հրաշալի ի-
մաստութիւն . . . կամ անըմբռ-
նելի ապու թիւն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՈՅ ԱՇԽԵՐԶԻ ԵՆՏԻՐԵՐ,
ՊՍՏԵՐՍՉՄԷՆ ՅԵՏՈՅ, ՈՒ
ՅԵՂԱՓՈՒՈՒԹԵԱՆ ԵՍԿՈՒՄ

Պ.

Սլէպթեան Սրբազան բարկութե-
նէն ի կրակ կտրած կառավարութեան
պաշտօնէից գաղափարութեանց զէմ,
սկսաւ հեռագրել Բ. Դուռն եւ Պատ-
րիարքարան. երեք օր շարունակ,
օրը 5—6 հեռագիր տալով եւ պա-
տասխաններ ստանալով:
Նոյնն ալ կառավարութիւնն ը-
րաւ. Սլէպթեանի հեռացումը խնդ-
րելով եւ առարկելով թէ Մուշէն եթէ
չը հեռանայ, կարճ ժամակամբ ընդին

հայ ժողովուրդը պիտի ապստամբեցնէ
կառավարութեան զէմ:

Երկու կողմանէ հեռագրներն ի
նկատի առնելով Բ. Դուռը, եւ Պատ-
րիարքարանի ընդոքին եւս գոհացում
մը տալու համար, մի թէսարիֆը եւ
գատախաղը պաշտօնանկ ըրաւ, միւս
պաշտօնէից մէջ ալ փոփոխութիւններ
առաջ բերաւ, եւ այսպէսով Ալվա-
ոինճ զիւղի խնդիրը գոյուցեցաւ:

Սյդ զէպքը փաշային աւելի դրդուց
ժամ առաջ վրէժ լուծելու, որով
սկսաւ ալ աւելի ուժ տալ գաւաճան
հայերուն, որ Սլէպթեանը մատնեն
Բ. Դրան. հեռագրի մը պատճէն ձեռ-
քերինն տալով, նոյնութեամբ 14
ստորագրութեամբ հեռագրեցին Բ.
Դրան թէ «Սլէպթեան Սրբազան
արդիւք կը դառնայ կառավարութեան
զործողութեանց, եւ միանգամայն
ժողովուրդը կը գրգռէ կառավարու-
թեան զէմ ապստամբելու, այս առ-
թիւ կը խնդրեմք ատոր հեռացումը»:
Բ. Դուռը այդ հեռագրը վարկենա-

պէս նկատողութեան առնելով, Պատ-
րիարքարանէն պահանջեց այդ քաջ
արի առաջնորդին հեռացումը Մշոյ
գաւառէն. Պատրիարքարանը այդ
մատնութեան հանդէպ բան մը չի
կրցաւ առարկել, ըստ այնմ հեռա-
գրով մը Սլէպթեանը Պոլիս ուղեց,
Մշոյ գաւառը ողբացեալ վիճակի մէջ
ձգելով:

Սլէպթեանի հեռացումը գաւա-
ճանները եւս առաւել իրենց ան-
զգամութեան մէջ քաջալերեց. այլ
եւս ուրախութիւնը անսահման էր,
որովհետեւ յաղթանակած էին. միմի-
այն մնացած էր փաշային խոտաց-
ուած պաշտօնները գաւաճաններուն,
որ գլուխ անցնելով ժառանգէին. այդ
եւս հեռու չէր, իրենց առաջարկուած
զժուարութեան մէջ յուզայական
մատնութեամբ մը զուրս եկան. մի
միայն մնացած էր երկրորդ մը, որ
մրջանակ ստանային. այն ալ ի-
րենցմէ գատ ո՛ւր է մէկը չի պիտի
կրնար տապալել եւ բուն իսկ Սու-

թանը այդ հարցի մասին մտահոգու-
թեան էր մատնուած եւ տապալու մը
մեղմէ կը ապաստէ:

Իսկ փաշան իր տարած յաղթու-
թեան վրայ կը պանծար. երկրորդն
եղած վերջացած համարելով, անոր
համար որ ամէն բան պատրաստուած
էր. այլ եւս չի պիտի զժուարանար.
քանի որ իր զէմ Սլէպթեանի նման
խոչնդոտ մը եւս չէր տեսներ:

Թէ ինչ էր երկրորդն, Հաս Պէր-
լինի 61րդ յօդուածին. Հասաստանի
որ նահանգները որ ցեղէ որ ըլլալ
մեծամասնութիւնը կուսակալն պէտք
է այն ազգէն ըլլայ. այդ հաշուով
Մուշ իր գաւառներով միասին մեծա-
մասնութիւն կազմած էր, ահա թէ ինչ-
պէ՞ս: Մէկ տարի առաջ Կեր. Կարե-
գին եպիսկոպոս Սրուանձտեանց Պատ-
րիարքարանի կողմէն երկու եւրո-
պացիի նետ թեր կողմերը գալով եւ
ազգայնամարի առնելով, 56,000 հայ,
37,000 առճիկ գտած էին. եւ այս
հա, իւր պէտք եղած սեղերն սեղե-

«Աղագայիններ» հրատարակա-
յին ժողով մը ունեցան հոս : Ա-
տենախօսներէն մին որ Քրիստո-
սի քահանայ կապրի, ըսաւ «ես
ձեզ պիտի խօսիմ մեծ յեղափո-
խականի օրինակով . Յիսուս խո-
հեմ յեղափոխական էր ու պատ-
ուիրեց որ կայսեր կայսեր տան
ու Աստուծոյն Աստուծոյ . էթէ
հրեայք անսային աւս խրատին
այժմ քաղաքականացէս ազատ
էին» : Ետ քաղաքի էր որ արտ-
դրաւոր ատենախօսը միշտ բա-
ցատէր թէ քանի որ հրեայք
Յիսուսէ վերջ տուն Սուլթանին
Սուլթանի, Չարին Չարի, Կայ-
սերն Կայսեր, և իրենց քոհե-
մութիւնը նպաստեցու հեծած
կենդանիի հիւսիսներէն ալ ան-
գին անցաւ, հապա ինչո՞ւ չազա-
տեցան : Աս կէտը գործին չէր
գար և ուստի վրայէն ցատկեց :

Յաջորդ ատենախօսը Պ. Չիթ-
ճեան էր որ «յեղափոխութիւն
հեղ մըն ալ փոխել կը շնանակէ»
ըսաւ ու սկսեց բացատրել թէ
իրենք ժամանակին թունդ յեղա-
փոխական էին և հեղ մըն ալ
փոխեցին ու «խոհեմէի» եղան :
Կերեւի թէ Չիթճեան երբ բան-
թօրն կամ բաճկոնը կը փոխէ
յեղափոխութիւն ըրած կը սեպէ,
ու այդ է պատճառը որ թրքա-
կան շփին տակ ստակելու աստի-
ճանին հասած ժողովրդի մը սր
ալ չի կրնար տանիլ եղած անի-
բաւութեանց համբերութիւն կը
քարոզէ :

Այս պարոններ, յեղափոխու-
թիւն ձեռն համար «հեղ մըն ալ
փոխել կը շնանակէ» . դուք ձեր
կոչիկներէն աւելի շատ պիտի
փոխէք զայն ձեր շահերուն յար-
մարացնելու ու թերեւս օր մը
իրեւել ձեր մի հնամաշ հագուստը
ծախէք, աստոր կասկած չունինք,
բայց հայ ժողովուրդը, այդ
բազմաշարժատ ցեղը, ձեռն ձեր
փոխութեաններու մէջ ճանչնալ
սկսած է . ու օր մը . . .

ՌՈՒՍԷՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Քանի մը օրէ ի վեր Պուքէշի
կառավարութիւնը խիստ որոշում
մը տուաւ, բոլոր այն օտարա-
կանները որոնք յայտնի պաշտոն
կամ զբաղում մը չունին անխարա-
բար պիտի արտաքսուին Ռուսա-
նիայէն : Այդ շրջանը գտարիւ
պորտները կերելի թէ մեծ մա-
սամբ թուրքերն եղած են, քանի
որ անսլին անպատանոց մէ տա-
սընեկու հոգի սահմանագլխէն
դուրս վտարուած են . և այդ
արտաքսուողներուն մեծ մասը
իրենց յօժարութեամբ Ռուքիա
վերադարձաւ ու շուրջն ի շուրջ
կրնայ հետեւի ի վէջ անոնք ինչ
տեսակ կասկածելի ու անխոստ-
վանելի պաշտօններով — իմա-
ցիր վարձկան լրտեսութեամբ
Թուրք—կառավարութեան ան-
ուղղակի պաշտպանութեան տակ
կը գտնուէին, որոնց մեկնուս-
վըն շատեր պատ շունչ մը առ-
նելու գոհունակութիւնը պիտի
ունենան :

Պուքէշի կառավարութիւնը
այս խիստ բայց արգար՝ որոշու-
մով մեծ խոհեմութիւն մը ի դործ
գրած կրնայ համարուիլ և շնոր-
հատելի է մանաւանդ այն հե-
ռատես քաղաքականութեան հա-
մար որով մէկ կողմանէ առանց
Թուրք կառավարութեան արժա-
նապատութիւնը — եթէ երբէք
մնացած տակաւին — վերադարձ
ըլլալու կարող եղած է արտաք-
սել երկրէն թուրք լրտեսներու
զատարկապօրա վոհմակ մը որ
Պուքէշի մէջ և ներքին քաղաք-
ները միշտ խռովութեանց սկզբ-
նապատճառ եղած է, և, միւս
կողմանէ անուղղակի կերպով գո-
հացում մը տալով պուլկարական
կառավարութեան զխանաղտա-
կան պահանջներուն, որ այս մի-
ջոցին շատ սուր կերպարանք մը
ստացած ըլլալն կը հուսատուի
ամենուրեք :

Եւ սակայն ուսմէն կառավարու-
թիւնը միշտ այսպիսի խոհեմու-
թեամբ ու հեռատեսութեամբ

վարուած չէ : Անոր քաղաքակա-
նութիւնը որ կը կայանայ գրացի
կառավարութեանց հետ հաշտ ու
խաղաղ ապրելու և մանաւանդ
գրացի կառավարութեանց միջեւ
հաւանական պատերազմի մը մի-
ջոցին հաշտարար հանդիսանա-
լու մէջ, ստեպ այնչափ յախուռն
ու անխորհուրդ միջոցներու կը
դիմէ որ փոխանակ իտաղալու-
թեան սատար մը ներկայանալու
իր վրայ կը կեդրոնացունէ դրա-
ցիներուն վրէժխնդրութիւնը և
այսոյէս խանդարումի մը պատճառ
կը դառնայ :

Ռուսներն զիտէ այսօր թէ
Պուլկարիա ինչ տեսակ գաղտնի
գիտարութիւններ կը տածէ
Թուրքիոյ և մանաւանդ Մակիդո-
նիոյ նկատմամբ և ինչ տեսակ
պատրաստութիւններ կը տեսնէ
փութով իր նպատակին հասնելու
համար . և որովհետեւ Մակիդո-
նիոյ մասին ինքն ալ խել մը
գաղտնի ու անիրականալի գի-
տարութիւններ կը սնուցանէ,
Պուլկարիոյ տեսակետները յե-
ղաշրջելու և անոնց գործադրու-
թեան առջեւ պատնէշ մը քաշե-
լու նպատակաւ մէջտեղ կը նետէ
յանկաթ սահմանագլխի խնդիր
մը որ արդէն իսկ փակուած կը
համարուէր 1898էն ի վեր : Այս
այնքան յախուռն կերպով երե-
ւան ելած խնդրոյն վրայ կարծէ
քիչ մը ծանրանալ քանի որ հե-
ռաքրքրական է իր այժմէու-
թեամբը և անոր յաջորդելի հե-
տեւանքով :

Երկու կառավարութեանց մէջ
կնքուած դաշնագրութեան մը
համաձայն, Պուլկարիոյ և Ռու-
սանիոյ սահմանագրութիւնը կը բաժ-
նէ Գանուբի նաւարկելի հոսանքի
ուղիութիւնը : Չիթնիցէն (Սիս-
թովի գլխաւոր) քիչ մը վեր Պու-
ժօրէանօ անունը բաւական ընդար-
ձակ կղզեակ մը ունի Ռուսներն,
նմանապէս Պուլկարիա ալ անկէ
քիչ մը աւելի վեր ուրիշ վոքրիկ
կղզեակ մը ունի : Գանուբի ուղ-
իութիւնը Ռուսներու կողմէն
քերելով կուգայ երկու կղզեակ-

ներուն մէջէն կանցնի և Պուլկա-
րական եզերքէն սահելով կեր-
թայ . որով Գանուբի ընթացքը
հիմ առնուելով ըստ դաշնագրու-
թեան՝ մեծ կղզին Ռուսներոյ իսկ
փոքրը Պուլկարիոյ կը պատկանի :
1898ին յանկարծ հոսանքը իր
ուղղութիւնը կը փոխէ և երկու
կղզիները միանալով մի մեծ կ
կղզի կը կազմեն : Գիւանագրու-
կան թոյլ ու կարճ բանակցու-
թեան մը վերջ, այդ կղզին Պուլ-
կարիոյ ձեռքը կը մնայ, և ամ-
բողջ երկու տարի խնդիրը վերջ-
նականապէս փակուած կարծուելէ
վերջը, ներկայ տարւոյ մէջ՝ ան-
սպասելի կերպով երկրորդ ան-
գամ այս խնդիրը կը վերաբաց-
ուի սուր կերպարանքի մը տակ :

Ռուսներն չուզէր և ոչ իսկ
սանդիմէ գր մը հող կորսնցնել,
հետեւաբար Պուժօրէանօ կղզին
իր սեպհականութիւնը նկատելով
անոր մէջ գտնուած անտառը ու-
մէն զիւղացիներուն կը ծախէ .
երբ զիւղացիք անդ փայտ կտ-
րելու կերթան, Պուլկար սահմա-
նապահ զինուորներ թոյլ չեն տար
Տեղւոյն կառավարութիւնը միջա-
մտելով թէպէտ և կուզէ զինու-
րական ցոյցով մը Պուլկար պա-
հակները վանել, բայց անոնց
անդրդուելիութեան հանդէպ, կը
որոշէ եղելութիւնը Պուքէշի պա-
տերազմական նախարարին՝ հե-
ռաքրել : Այս վերջինը հեռագ-
րով կը թոյլատրէ անմիջապէս
վաշտ մը զինեալ հետեւակ զըր-
կել տեղւոյն վրայ և Պուլկարիոյ
կողմանէ ընդդիմադրութեան մը
պարագային զինու զօրութեամբ
գրաւել այդ պատասիկ մը հողը :
Պուլկար պահակները թէպէտ և
նոյն օրը յետ կը քաշուին, սա-
կայն հետեւեալ օրը կրկին զայն
կը գրաւեն աւելի ստուար մի
թուով : Պատերազմական նախարա-
րը աւելի ազդեցիք միջոցներու
զիմեղով երկու զրախաւոր լաստ
կր զ կէ կղզիին մօտը, Գանուբի
երկայնութեանը վրայ գունդ մը
զինուոր կը կեդրոնացունէ և մեր-
ձակայ գիրքերու վրայ թնդա-

կազմուած էր : Այդ ազդանաւարու-
թիւնը հերքելու համար, Բ. Գուր
միջոցներ ձեռք առած և Պիթիւսի
կուսակալութեան գրած ու գործա-
դրութեան հրահանգներ տուած էր :
Բ. Գուր հրահանգներու հիման
վրայ, կրկին փաշան հեռագրով մը
14 դաւաճանները Պիթիւս կանչեց
Հրեւէր ստանալուն պէս ամենայն
ուրախութեամբ ճանբայ ելան . միւս
կողմէն Մոսաւ պիշ շայր Միրզա
պէշ, այդ դաւաճարական դարձուածք-
ներուն տեղեակ ըլլալով, վատ հայե-
րուն Պիթիւս կանչուիլու և միանգա-
մայն ճանբայ ելելին լսելով, և
տեւնուն կերթայ և Մորիս ըսուած
քերտ գիւղի քով կը հասնի, և ա-
տոնց կը հարցնէ թէ «ինչո՞ւ կան-
չուած էք, գիտէ՞ք արդեօք» : ոչ կը
պատասխանեն : նոյն միջոցին Միրզա
պէշ կը սկսի խնդիրը նոյնութեամբ
պարզել սա ձեռով՝ ձեռք կանչած են
միմիայն մասերագրութիւն մը ստո-

րագրելու համար : քանի որ Պիթիւսի
նահանգի մեծամասնութիւն հայը
կազմած է պէտք է հայ կուսակալ
մը գայ . այժմ Բ. Գուր այդ խնդրոյ
մասին հակառակ ըլլալով, կաշխատի
հայոց թիւը տանկաց վերաբերելու,
իսկ տանկաց թիւը հայոց . ահա ձեռ
չընէք, եթէ նոյնիսկ բոնի միջոցնե-
րու ալ դիմեն ձեզի վախցունելով .
ընդդիմացէք մինչև որ վաղը կէս օ-
րին ես հասնիմ :

Միրզա պէշն բաժնուելով երե-
կոյան Պիթիւս կիջնեն . փաշան ի-
մանալուն պէս առաւօտուն շուտ մը
իր պաշտօնատուն կը հրաւիրէ և մէկ
մէկ սուրճ խմցնելէ յետոյ, մասիրա-
գրութիւնը մէջ կը բերէ . և կը հրա-
մայէ ստորագրելու . այդ դաւաճան-
ները առանց բառ մը իսկ առարկե-
լու, ստորագրել կը սկսին . միմիայն
մէջերին ըլլալ Սահակ Տէր Դաւիթ-
եան կը ընդդիմանայ և չի ստորա-

գրէր . փաշան կը բարկանայ, միան-
գամայն կը սպառնայ եւ մէջն աքտոր
զրկելու . և այսպէսով 96,000 թիւը
99,000ն կիջնէ ու խնդիրը կը գոց-
ուի . այդ միջոցին Միրզա պէշ վրայ
կը հասնի, և ամէն բան վերջացած
կը տեսնայ ի շահ կառավարութեան,
կը զայրանայ վրանին, բայց ի՞նչ օ-
գուտ :

Ահա փաշան, ամէն խնդիրներ Բ.
Գուր պահանջմանց և իր փափաքա-
նաց համեմատ լուծելէ յետոյ, այդ
դաւաճաններուն մէկ մէկ պաշ-
տօններ տալով, իրենց տեղերը
զրկեց : Այդ օրէն սկսեալ Մշոյ գա-
ւառներու մէջ բաժանուցներ, երկ-
արտակալութիւններ և կռիւներ հակա-
յարքայ առաջ երթալ սկսաւ . շատ մը
ստակ վնասներ իրարմէ կրելով .
ինքզինք գիտցող՝ ազգային շահերը
վտանգուած տեսնելով սկսաւ յետս
քառել ասպարէզը վտանգուն ձգե-
լով :

Նպատակա ժամանակակից պատմու-
թիւն գրել չըլլալով . չեմ ուզեր ամէն
մանրամասնութեանց մէջ մտնել, ա-
նոնց պատճառներու աղբիւրները ցոյց
տալով, այլ այնչափ դաղափար մը
տալով կանցնիմ . ի վեր հանելով թէ՛
այս վերջին քան տարիներուն մէջ
կառավարութեան ձեռքով հայ ժո-
ղովրդեան գլխուն ինչքեր եկան ան-
ցան . իսկ միւս կողմէն, ժողովուրդն
ստոր հանդէպ ինչպէս վարուեցաւ,
և ի հարկին ինչպէս գիմադրեց՝ մաս-
նակի շարժումներ դուրս բերելով :

ՄԱԿԱՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԻԱՆ

(Ետնուակիւր)

նօթներ զետեղել կուտայ, և ան- նշան հրացանաձգութենէ մը վերջ պուկարները կրկին տեղի կուտան և ուսմէն զինուորներ կը գրաւեն կղզին, պուկար պահակ- ներու կայտորանները աւրելէ յի- տոյ, Այժմ խնդիրը գիւտնագի- տութեան միջոցով երկուստեք յառժամաբար կը ծեծուի:

Ռումանիոյ յարաբերութիւն- ները թուրքիոյ հետ ալ շատ կը ծ- կուած վիճակի մը հասած է: Ռումանիոյ և թուրքիոյ միջեւ եղած մաքսային պայմանագրու- թիւնը անցեալ տարւոյ վերջ ա-ւարտեցաւ և Ռումանիա այժմ չուզեր վերանորոգել զայն. այս պատճառաւ թուրք կառավարու- թիւնն ալ Ռումանիայէն ներմու- ծելի ալիւրներուն վրայ մաքսա- յին տուրքը 8 առ 0/0 էն 11 առ 0/0 ի բարձրացուց: Ալիւրի նուազագոյն քանակութիւնը որ մէն մի տարի կարտածէ Ռումա- նիա գէպի թուրքիա 29 միլիոն քիլօկրամ է: Նախորդ և անցեալ տարի երբ տակալին մաքսային տուրքը հաւասարայէն ամէն երկրի համար 8 առ 0/0 էր, Ա- մերիկայ յաջողեցաւ մեծ քանա- կութեամբ ալիւր ներմուծել ի թուրքիա զգալի կերպով նուազ- ազոյն մի գնով և այժմ որ 3 0/0 մաքսային տուրքի յաւելում մը բարդուած է Ռումանական ար- տածութեան վրայ, աւելի մեծ զարկ մը չ'ի պիտի ըլլայ արդևօք ի նպաստ Ամերիկեան ալիւրին և վաճառականութեան որ արդէն հոգեւարքի մէջ է անցեալ տար- ուան երաշտութեան պատճառաւ:

ՄԵՂՈՒ
Ռումանիա, 28 Փետրուար

Ձ Ա Ր Դ Ը

«Անահիտ» վերջին համարը երկու աչքի ընկնող զարդ ունի. մէկ իր կողերի վրայ գտնուած բէկլամները, իսկ միւսը ալիւրի Սվաճեանի «Չարդը»:

Պուսականայդ հուշակաւոր գրա- գէտի կարծիքով «Չարդը», Փա- րիզեան նորածնութիւնների այդ հանգէսը, հայոց կեանքի «իրա- կան պակասը» պէտք է լրացնէ և ամէն տեղ պէտք է սր ստանան: Ինչը սոված հայ, էլ ուրիշ բանի պէտքը չունիս. ամէն բան կատարեալ է. և մենք խմբագիրը քեզ յորդորում է նորածնու-

թիւնների հանգէսը ստանալ: Ինչպէս երեւում է այդ հիւանդ գրագէտի ազգային վերածնու- թեան մասին կազմած ծրագրի կարեւոր կէտերից մէկն էլ «նո- րածնութիւնը» է:

Եւ դեռ կարծողներ կան որ «Անահիտ» խմբագիրը կարող է մի լուրջ բան գառնալ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մէջզէրէթ»-էն հետեւեալը կը քաղենք:

Սուլթանը հետզհետէ աւելի կը վրդովուի, նոյն իսկ կը սոսկայ մտածելով որ դրամով չի պիտի կրնայ Մահմուտ փաշան Պօլիս բերել. կը վախնայ թէ վերջինը ոչ միայն երիտասարդ թուրքե- րը միացնէ այլ և հայերը որով խնդիրը շատ պիտի բարդուի և վտանգը աւելի պիտի մտանայ: Օք-Մէտանի ալպանացի զին-ւորներուն և ծովային լազ զին-ւորներու միջեւ պատահած կռիւը սարսափեցուցեր է Սուլթանը, որովհետեւ կը հաւատեն թէ լա-զերը որոշած են պալատի պահա-կը շնչել:

Մահմուտ փաշայի յամառու- թիւնը, իր մօտիկ զօրքերու մէջ եղած անհամաձայնութիւնը հե-տըզհետէ Սուլթանին աւելի մեծ սարսափ կաղզեն:

Ամեն տեղ գիշերները անոր համար ծանր են. Բանաստեղծ մը կամ վրպասան մը պիտի ըսեր թէ Սուլթանի անհամար զոհերու ուրուականները կը թափառին իր շուրջը. այն ինչ մեր կարծիքով Համիտը միշտ պատրաստ նոր ոճ- րագործութիւններու բոլորովին խղճի խայթում չզգար. ան մեռ- եալներէն չի վախնար, բայց ոչ լ մնացածներէն կը սոսկայ:

Ինչ որ ալ ըլլայ, այս վեհա- պետը իր գիշերային զգուշու- թիւնները աւելի ձեւափոխեր է. մինչեւ օրս ամեն գիշեր ննջա- րանը կը փոխէր իր հետքը գի- շերային սպանիչներէն կորցնե- լու համար:

Իսկ հիմա ուրիշ բան մը հնա- րած է:

Ան սենեակ մը վահանապատերէ «րուն մէջ կը փակուի ինքը իր ձեռքով դուռը կղպելով, անկող- նի վրայ չի պառկիր, որովհետեւ կը վախնայ թէ տակը պայթուցիք նիւթ դուրս, այլ թեթեւ մահա- կալի մը մէջ, Ինքը իր անկողինը կը պատրաստէ շիւրջով բարձ և վերմակ:

Փետր. 27ին Լօրտ Բօպէրտս կը հեռագրէ Տրիտօփօտէյնէն թէ հակառակ պօէրներու խիստ գի- մագրութեան իրենք հասած են կարեւոր կէտի մը և սուլթանմար- տով ստիպած են պօէրները մեծ կորուստով իրենց բռնած տեղե- րէն հեռանալ:

Լրագիրները կը հազորդեն թէ Անգլիական կառավարութիւնը

հեռագիրներ ստացած է Քրիկէր և Շտէյն նախագահներէն, որ կը հարցնեն հաշտութեան պայման- ները:

Պրիւքսէլէն փետրուար 26ին կը հեռագրեն թէ Քարի գաղութը ապստամբեր է անգլացուց զէմ թուով 8000 հոգի:

Լօնտօնէն կը հեռագրեն թէ Քրիկէր զօրքերուն յայտարա- րած է որ պատերազմը ամիսէ մը պիտի վերջանայ. ըլլայ միջա- մտութեամբ, ըլլայ երկուստեք համաձայնութեամբ:

Թանը կը հազորդէ որ Անգ- լիական կառավարութիւնը որո- շած է գերի բռնուած պօէր մէ- նէրալ Քրօնմէյն զրկել Սուրբ Հեղինէի կղզին, ուր պիտի մնայ մինչեւ պատերազմի վերջը, և կաւելցնէ որ Անգլիան չուզեր գերիները փոխանակել:

Փետրուար 26 ին Պուտափէշ- ար մէջ նախկին նախարարապետ Պանֆի և երեսփոխան Ռունկրա մենամարտեր են, երկու կողմէն ատրճանակ պարպուեր են, բայց առանց հետեւանքի:

Փետրուար 29ին Բօպէրտս կը հեռագրէ թէ մէնէրալ Պրէնչ ընդհարում ունեցած է պօէրնե- րու հետ, երկու բլուր գրաւած, և Շտէյնի եղբայրը գերի բռնած՝ հեռագրական թիւերը կտրուած են. Տրիտօփօտէի քով անգլիա- ցիներու կորուստը եղած է 320 վիրաւոր, 70 սպաննուած և ան- յայտ:

Մարտ 1ին Բէօյտէրի գոր- ծակատարութիւնը կը հազորդէ որ Պրէնչ առած է Բիթօմփօն- տէն:

Գերմանական թիւթի մը Պէլլիւնէն կը հազորդեն որ Անգ- լիան թուրքիոյ չի պիտի օգնէ Ռուսիային զիմագրելու երկա- թուղիներու խնդրոյն մէջ, որով- հետեւ թուրքիան ականջ չը կա- խեց Անգլիոյ իր հոգեւորներուն բարենորոգումներ մտցնել կայս- րութեան մէջ և չէ կատարած իր պարտականութիւնները հայերու վերաբերմամբ:

Պուսէն մարտ 1 ին կը հե- ռագրեն թէ Իսկիւպի գծոյ մահմանականները հանդարտե- ր են. շուկան բացուած է որովհե- տեւ վալի Հաֆֆ փաշան արդէն հեռացայ է: Բրիտանիայի միւ- թէիարիֆը Իսկիւպ կանչուած է խաղաղութիւնը վերահաստատե- լու համար:

Պերլինէն կը հեռագրեն որ Գերման ժէներալ Շչիւլպնակէլ, ճրդ զբարբաժնի հրամանատարը հետեւեալ հրամանը արձակած է, որը հիմա շատ մը բացատրու- թեանց նիւթ դարձած է. այդ հրամանով ժէներալը կարգիլէ Փօզնանի և ուրիշ լեհական քա- ղաքներու բերդապահ զօրքերու ենթասպաններուն ամուսնանալ լեհ սպիտակներու հետ, բացի ատորմէ և այն աղջիկներու հետ որոնց ծնողները ընկերվարականներ են:

Վերջապէս այդ ժէներալը կը յայտարարէ թէ պէտք չը կայ որ ենթասպաներու զաւակները բարձ- րագոյն զպրօններ մտնան, ո- րովհետեւ թաղային զպրօններն անոնց համար բաւական ցուցիչ են:

Թ. ՏՄԻՆ «Սիւնթիւլ»

«Վէսէլլօ» հայ դերասանական խումբը, վաղը գիշեր, Մարտ 5, առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացնէ «Անմեղ հնամաճառը կամ զոյգ մը նուէր սալիք ձեռ- նոց», տրամագոմէտի 6 արար:

Խիստ ծիծաղաշարժ զուեջտ մը: Փորձի դրուած է «Փրէշտափա- ճա կօ կամ սերպ և պուկար պա- տերազմին մէջ անցք մը». հե- ղինակ Նիքօլա Շիֆօզով: Սոյն թատերախաղին տեսարաններուն համար խումբս ամէն ջանք և զո- հողութիւն չի խնայելով փայլուն կերպով քիչ օրէն պիտի ներկա- յացնէ:

Ա Ձ Դ

Տ. Վահան Մամիկոնեանի «Կ. Պօլիտ» ճաշարանը փոխադրուած է հանրաժա- նօթ «Օթէլ Պորիս», ի Ռուսչուք, ուր բաւ առաջնոյն կը պատրաստուին հայկական համեղ կերակուրներ:

Յ. ՃԱՆԿԻԼԻԱՆ

ՆՈՐ ԲԱՃՈՒԱՅՐ ԻՍԿԻՆՆԱՆՈՅ
Թիւ 389 Իսկիւպ-պաշի

Կը վաճառուի ծրախոս, բոսթայի եւ աղբրապրի ամէն սեսակ բույր նաեւ զանազան տեսակ սիկարներ: Ծճ թուականին հրապարակ ելած Պուկարիոյ զահաժառանգ Պօլիսի պատկերազարդ քառթ-փօթալներ, որ այժմ չեն գործածուիր: Նոյնպէս եւ կը վաճառուի «Շարժում»:

Շարժումը կը ծախուի նաեւ. նա- մակատան զիմաց նոր բացուած փոք- րիկ գրատունը:

Նաեւ Շարժումը կը ծախուի Ա. Չարբանկիանի գրատունը եւ իւր- բարցրութեան մէջ:

ԸՆԴԱՐՉԱԿ ԵՐԳԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐ ՀԱՆՎԱՆՈՅ

Հին եւ նոր Ազգ. երգերու գին 2 Ֆյու- սոյն երգարանը կը ծախուի Վառնա, Ա. Չարպանկիանի գրատունը նաեւ կը զանուի ամէն տեսակ զպրօգական եւ վիպական գրքեր. դրամի փոխա- րէն կընդունի նաեւ նամակադրոյժ. Կնուս եւ վաճառում ամէն տեսակ գործածուած նամակադրոյժ երու:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԿՆԱՐԺՈՒՄԻ

Կը տպագրուին ամէն լեզուէ ալ ցետոմն, հասցէտոմն, նամա- կաղլուխ, հարաւանկան հրաւի- րաղիւր, մահաղդ:

Գիւնը յոյժ զլուրամտացիլի- Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգու- թեամբ և վուրով կը կատար- ուին:

ՅԱՆՉՆՄԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՍԻԿ
Աղագրագրութեան Գրաս- րան